

րայ հիմնուած համազմունքին թէ քաղցը (սովը) և աղքատութիւնը և կերական կեանքի երկու կարող տարրերը առաջացնում են սաստիկ տանջանքներ և անգործութիւն և մարդկային ազգի ջարդ: Մենք մի և նոյն ժամանակ ցոյց տուինք որ միայն իւր բարիքի վերայ խեղական մտածողութիւնը նպատակին չի հասնէր որ անհրաժեշտ է ընդհանուր պարտականութիւնն է ամեն դատակարգի բարեկեցութեան նոյն մեծ մասի պիտոյքներին բաւականութիւն տալուն վերայ հոգալ: Մենք դարձեալ կամեցանք ցոյց տալ որ կուլտուրան այս խօսքի ամեն նախնորդական նշանակութեամբ ինչպէս մարդիս նոյնպէս և կենդանիների սերունդը լուացնումէ որ կուլտուրայի պակասութիւնը առաջացնումէ ամբողջ ցեղերի անտիրելութիւն որ միայն կուլտուրայի ուժով կարելի է հեռացնել մարդկային պատիժները — վարակիչ հիւանդութիւնները, ժանտախտները, հացկաւարները, Յիշեցէք ընթերցողներ, որ քաղաքակրթութիւնը և կուլտուրան ժանտախտին ծնչեցին իւր սեփական հոյրենիքում — Եզրիպատում: Այսպիսով ուրեմն մենք տեսնում ենք, ներքերտ Արեւելի շատ նշանաւոր սկզբունքի ճշմարտութիւնը որ իւրաքանչիւր փոփոխութեան հետեւում միեւնոյն աւելի փոփոխութիւն է:

Ուրիշ բաներով արտայայտելով այս սկզբունքը, մենք կվերջացնենք մեր յօդուածը որ կուլտուրայի իւրաքանչիւր բարեբար փոփոխութիւն յաջորդումէ մարդի ընկերական կեանքի կամ վիճակի միեւնոյն աւելի բարձրում (կատարելութիւն):

ԳԷՐԳ. ԶԷՏ Ա. ԼԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ

Թ. ՊԱՆԵԱՆ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

Բնական և աւետարանական ճշմարտ և անսխալ վճիռ է չպարփակել զլուցեալ ճրագն ընդ գրութեան, որք յանդգնին ներհակաբար վարիլ զլոյսն ի խաւարի թաքուցանել զուն զործելով՝ մեղանշեն նոքա ընդ դէմ բնութեան և աւետարանական ճշմարտութեան:

ՎԵՀԱՓԼՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ ԳԷՐԳ Դ. Երբ անտի ամբառնալոյ յԱթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց, ոչ միայն յեկեղեցւոյ մերում, այլ և յողջոյն ազգի մերում լուցեալ զլուսապայծառ ճրագունս բարեկարգութեան, սւսման և յառաջադիմութեան, հանապազօրեայ տքնութեամբ իւրով զորդիս Եկեղեցւոյ լուսաւորէ ի միտս և ի հոգիս զոր մոռանալ կամ ուրանալ երբէք չկարէ անաշտ պատմութիւն ազգիս այսօր և յապայն զի նշանաւոր բարեկարգութիւնք և ազդաշէն զործք նորին Օծութեան հոշակեալ քարոզին ի համայն ազ-

զայնոց ընդ ամենայն աշխարհ և լուսաւորեն զմիտս ողջութեամբս. բայց առ այժմ՝ դանց արարեալ զբազմոք զիտաւոր սիրագործութեանց նորաւ որ մեծահանճար մտաց և ճարտար գրչի է դարձ, միայն զհայկական Չայնագրութեան նորոգմանէ և տարածմանէ զրեւմ. համահասիւ յորմէ Եկեղեցիին Հայաստանեայց ի դարաւոր ժամանակաց անտի զրկեալ էր անհոգութեամբ կառավարչաց Եկեղեցւոյ, որպէս ունի տեսանել ուսումնասէր ընթերցողն ի ստորեւ թէ և ընդարձակօրէն զրեալ ևս է զայսմանէ ի յառաջարանութեան ձայնագրեալ Հարականին՝ յամին 1875, Հայկական ձայնագրութեան արհեստ սկզբնաւորեալ է ի սրբոց թարգմանչաց մերոց ի սկզբան Ե. դարու ըստ Ճշգրիտ պատմական տառնութեան, որ ի յառաջարանութեան Հարականոյի մերում. և 2-ամէն Հ. Գրքայեղի պատմագրութեան Հայոց հատոր Ա. երես 510, տուալ ի Սորին աշակերտէ սրբոյն Մեսրոպբայ, որ ի թուել զմեծագործութիւնս սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպբայ, զրէ «Երկոքին ի միասին մեծն Սահակ և սուրբն Մեսրոպ կարգեցին զովն եղանակաւոր ձայնս և զայլ ևս երկուս ստեղիս և արարին Հարականս հոգեկից բանիւք» և ըն. զայս պատմութիւն հաստատեն և կանոնք խաղից կամ խաղից երաժշտական գիտելեաց, որ գտանի ի գրադարանի Սրբոյ Էջմիածնի և ի գիրս «Մանր ուսմունս» անուանեալ, զրեալն ի թուին Հայոց Տօմարի ՊԱ (յամի Տեանն 1352). ի Քէֆէ քաղաքին Խրիմու (ի Թէոդոսիայ), յորում բացայայտ տեսանի, զի աստի 500 ամբ յառաջ յԵկեղեցիս Հայոց ոչ միայն զՀարականս, այլ և զմեսիկոս հանդերձ ռուսէ եղեցին երգումն և զտամանոս ամենայն տունից իրրե զճաշու Հարականս ձայնիւ երգէին հին երաժշտական խաղովք, այն է ձայնագրութեան արուեստիւ (նօթայ), որոյ կանոնական դասագիրքն, որպէս ասացաք գտանի ի գրադարանի Մայր Եկեղեցւոյ:

Ձայն հին ձայնագրութիւն ի վերջին դարս մեռացեալ էին զպիրք և քահանայք Հայոց և միայն զեղանակս ի տեղիս տեղիս երգէին առանց համարեան արուեստին ծերունի զպիրք և քահանայք*): Իսկ ի բազում տեղիս առանց ներդաշնակութեան զովն ձայնս և զգարձուածն շփոթ և խառն ի խառն երգէին ի բաքանչիւր զպիր ըստ քմաց իւրոց և դարձուածոյ ձայնի իւրում զմի և նոյն եղանակ Հարական ի զանազան եղանակս երգելով և միշտ փոփոխելով մինչ ի 1830 ամն. Թէպէտ ամենք ի

(*) Վասն զի դեռ գտանին յանկեալ մեծին Հայոց յԱրարտեան եւ ի Սիւնեաց նահանգս ծերունի քահանայք եւ զպիրք (խալֆոյ կոչեցեալք), որք պահպանելով զհին եղանակն Սրբոյ Էջմիածնի՝ երգեն զՀարականն աշուէս, որպէս պիտեան ձայնադրեալ եղանակն է. զօ. ի Նախիջևանաց դաւառի Զուղայեցի Պօղոս եւ Աստապուտցի Աբրահամ քահանայք (վախճանեալք յանցեալ ամն), որոց զերգեցողութիւնս Հարականաց լուեալ եմ ես ինքնին եւ համամատեալ ընդ այժմու եղանակին, որք եւ ուսեալ ասէին 75, ամբ յառաջ ի վասն սուրբ Նախալկայի Գարաշամբայ, նմանա-

Շարականագէտ զպրաց Կ. Պօլսոյ փափագէին իմանալ կամ ուսանել ի յոյն ձայնագրագիտաց զարհեստն Զայնագրութեան, զոր սակս և դիմին առ յոյն ձայնագրագէտ զպիրս, բայց նախանձութիւն յոյն զպրաց խաչոնդան եղև նպատակի մերոց զպրաց, ապա Ստեփաննոս Պատրիարքն Հայոց Կ. Պօլսոյ խնդրեաց ի յունաց Պատրիարքէն զյոյն վարժապետ ոմն առ ի ուսուցանել զպրաց Հայոց զարհեստ Զայնագրութեան, և մինչ յոյն վարժապետն ուսուցանէր Հայ զպրաց Կ. Պօլսեցի պատուելի Համբարձումն Պատրոյ մակեդոնեալ յայտնեաց Պատրիարքին Հայոց թէ ինքն դիպէ զարհեստ ձայնագրութեան, ուստի և պատրիարքն Հայոց յետքանի ժամանակայ արձակեալ խորհրդով իշխանաց զյոյն վարժապետն յանձնեաց զհինգ աշակերտս նորա Պատրոյ Համբարձումաց, որ ծանօթացեալ ձայնագրութեան արհեստին, ըստ Տաճկական եղանակացն (Սապահի, Գիւկեհաճ, Սէկեհաճ, Զարկեհաճ և ընդ) ուսեալ զհին եղանակ Շարականի Հայոց ի վանս սուրբ Կարապետի, որ ի Կեսարիայ ի նարին միաբանիցն, որք պահպանեալ էին զայն արհեստ ինախնեաց ոմանի իբրև նոր իմն հեղինակեաց զՀայկական ձայնագրութիւն և ուրոյց զոյն հինգ աշակերտաց միայն, մինչ զինի մահուան նորա կանանական դասագիրք իւր անկաւ ի ձեռս աշակերտաց իւրոց Երեստակիօսի Երեսողոմի և Երէքսանի երև, որք թէ կատարելագործեցին և թէ Հայացոյցին զգրեցին Տաճկական խաղիցն յարմարեցեցեալ խաղից շարականի մերում, որք են փուշ (փո լ), եկորճ (է թ), վերնախաղ (վէ թ), բենկորճ (բէ թ), խոսրովային (խո թ), ներքնախաղ (նէ թ), և պարոյկ (պա թ), բայց սոքա ևս իրրև սեպհականութիւն և մնալաճառութիւն ինքեանց պահելով զոյն չկամեցան ուսուցանել այլոց, թէպէտ և առատ վարձուք դասախօսէին յուսումնարանս Հայոց ի Կ. Պօլիս և աշակերտք նոցին զամս հինգ և աւելի ևս տառապեալ հաղիւ ուրեմն սովորէին ընթանալ զձայնագրութիւնն, բայց չկարէին ուղիղ ձայնագրել զեղանակս:

Բայց ի 1874 և 75 ամս նախանձախնդիրն փառաց Հայաստանեայց եկեղեցւոյ Վեհափառ Տ. Տ. Գէորգ Դ. քաջ շարականագէտ*) կամեցեալ

պէս և և ի Սիւնեաց նահանգի դռանին Ծիրունի քահանայք եւ դպիրք ըստ պատմեցոց Գրիգոր Եպիսկոպոսի Տաթեւացւոյ, որք զհին եղանակն Շարականաց երգեն ըստ ձայնագրեալ եղանակին, զօ. Անտաթեանցի տիրացու Էդիսն, Կետաթաղցի Յովսէփ քահանայն եւ այլք, որք ուսեալ են 60—70 ամօք յառաջ ի վանս Տաթեւու, որոյ միտրանութիւնն յէ. դարու հնչեալաւոր յոյճ հանդիսացեալ էր ուսմամբ դանադոսն դիտութեանց և և մակարութեանց, և անդեակ երաժշտական երգոց, որպէս վկայէ Ստեփանոս Ռբբեւան պատմագիրն ի ԳԼ. ԻԷ. յերես 82:

(*) Վեհափառ Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսն ուսեալ է զեղանակն Շարականի Հայոց ի Կ. Պօլիս ի Սամաթիայ մեծ թաղն Հայոց եւ ի մայր Եկեղեցի պատրիարքարանին ի Գուսմ—գոփուս նոյնաթեամբ որպէս ի հնումն երգէին ի Ս. Էջմիածին. քանզի Թէոփորոս քաջալարծ Շարականագէտ եւ տրամորան Աւագ Սարկաւագ աշակերտն Երջանկայիշատակ Սիմէօն Կաթողիկոսի Երեւանցւոյ ի 1777 ամի ունեւոյ ի Կ. Պօլիս

զձայնագրութեան արհեստի մենավաճառութենէ զարձուցանել հասարակաց ուսանելի առարկայ, այնու ի քաղաքս և ի զիւ զօրէս Հայաստանի (ի Ռուսաստան) գտեալ յԵկեղեցիս մի և նոյն ներգաշնակութեամբ փառաւորել զսուրբ զԵրրորդութիւնն քաղցրանուագ երգովք Հարականաց և երգեցողութեանց, հրաւիրեաց ի Վ. Պոլսոյ զձայնագրագէտ Պ. Նիկողայոս Թաշճեան ի մայր Լժոռոս Ս. Եղմիածին գնել ի նմանէ զայն մենավաճառ արհեստն և տարածել ընդ ամենայն եկեղեցիս Հայոց՝ բոլորովին գոհացուցեալ զնա առատ վարձուք:

Աւստի Պ. Ն. Թաշճեան ըստ ցանկութեան և յորդորանաց Վեհափառ Հայրապետին պատրաստեաց զՄասագիրս—բանալի ձայնագրութեան, և ապա ըստ հրամանի Նորին Վեհափառութեան ժողովեցան ի Մայր Լժոռոս յամենայն գումարաց և քաղաքաց Ռուսաստանի և Վրաստանի երիտասարդ քահանայացու զպիրք սուիլի քան զերեսուն անձինս, ուսանել զարհեստն Ձայնագրութեան բոլորովին ձրիաբար իրրե ժառանգաւոր աշակերտ Մայր Լժոռոսոյ, ուրց ի սակաւ ժամանակի հաղորդեաց աննախանձարար և սղգասիրաբար քանքարաշահ Պ. Նիկողայոս Թաշճեան զկանոնս արհեստի ձայնագրութեան, որք յաջողեցան յընթացս երկց ամսոց ձայնագրութեամբ երգել զՀարական ի Տաճարի Մայր Լժոռոսոյ, զոռաջինն ի Տօնի սուրբ Յակոբայ Մծբնոյ Հայրապետի և զՁայնագրեալ պատարագի արարողութիւնս ամենայն հեշտութեամբ ի զարմացումն երկարամեայ աշխատութեամբ լեկուսիցն (ի Վ. Պոլիս) և ի նախանձ ոմանց մենավաճառ և քանքարանագոյց ձայնագրադիտաց, որք անշնորհ բանիք յարձակեցան ի վերայ Պ. Թաշճեանի պախարակել զնա վասն կատարելապէս ուսուցանելոյ այլոց զարհեստն ձայնագրութեան:

Վեհափառ Հայրապետ զայն պատեհատիմ շնորհեալ ի ձեռաց և ոչ զօր մի պարագայս Պ. Ն. Թաշճեանի, սկսաւ ի ներկայութեան իւրում՝ ձայնագրել տալ զՀարականս ամենայն զգուշութեամբ և քանիցս կրկնութեամբ, և ապա զայն ձայնագրեալ Հարականս տալ ի տպագրութիւն ծախիւք Մայր Լժոռոսոյ, Վերայիշատակեալ ձրիավարժ աշակերտք ուսանելով աստ ի Ս. Եղմիածին զարհեստ Ձայնագրութեան ըստ հրամանի Վեհափառ Հայրապետին՝ ինքեանք ևս ուսուցին բազմաց ի զարոցս քաղաքաց և ի վանօրայս Հառիճոյ, Տաթևու և այլն, և ապա այնուհետեւ ընդհանրացուցեալ նոյն արուեստ իրրե զասական անհրաժեշտ և պարտաւորիչ

զբազում աշակերտս ուսեալս զեղանակս հարականի ըստ երկեցողութեան միաբանից Ս. Եղմիածնի խկղքանէ անտի եւ յաւարս Սիմէոն Կաթուղիկոսի, նոյա մինչ ի վերջին ժամանակս ի 1839 ամի երգէին ի Ս. Աստուածածին մայր Եկեղեցւոջ Կ. Պոլսոյ զնոյն եղանակ հարակմա, յորոց մին է ուսուցիչ Վեհ. Հայրապետին մերոյ տիրացու Մեքայէլ վարժապետ քոջ հարակմադէա եւ արամբան, որ յետոյ ըստ թախանձանաց իշխանաց եւ ժողովրդեան ձեռնադրեալ է քահանայ ի Ամմաթիայ ի Ս. Գէորգ եկեղեցին անուանելով Զովէփ, որ ի քահանայութեան եւս շարունակէր զպաշտօն ուսուցչութեան իրրեւ քանքարաշահ ծառայն, որ յԱւետարանին:

առարկայ Հրամանաւ Կոթին Օծու թմեան մուծաւ յամենայն ուսու մեարանս
Հայոց ի Ռուսաստան. բաց յայսմանէ Հրամանաւ Վեհափառ Հայրապետ-
աին տպագրեցան ի Մայր Աթոռոյս տպարանի նախ Գասազիրք ձայնադը-
րեալ արհեստի, և տպա ձայնագրեալ ժամագիրք, երգեցողութիւնք Ա-
Պատարադի, և ամենայն երգք կամ Դարականք գտեալ ի Ճաշոցի, ի Մաշ-
տոցի ձեռնագրութեանց և օրհնութեան Ա, Մեռելի, ևս և Երգարանք
Իսկ յանցեալ 1880 ամի Վեհափառ Հայրապետն ըստ իւրում նախնի առ-
վորութեան նստուցանելով առջի իւր զերկուս քաջ ձայնագրագէտս ինքն
երգեաց և ետ ձայնագրել զամենայն քաղուածս օրհնութեանց Դարա-
կանաց ամենայն աւուրց ի զիւրութիւն զպրաց վան ժամերգութեանս օր
համարի լրումն ձայնագրեալ Դարականիս որեւ այժմ ընդ մամուլք տպա-
գրութեան գտանիս

Յայտօրիկ ձայնագրեալ գրեանս լձէ՝ ռըքան աշխատութիւն կրեալ է Վեհափառ Հայրապետն, լձողում գուշակել գնահատող ողջամիտ ազգայնոց, լձէ ռըքան ծախս կրեալ է տպարան Մայր Աթոռոյն ի ձուլել զձայնագիրս և ռըքան մտաւ որ շարժարանս կրեալ են զրաշարք և սրբազրիչք, լձողում՝ գուշակել ձայնագրողիտաց և տպարանապետաց, նոյնպէս լձողում՝ ապագային գնահատել զմեծագործութիւնս բազմաբոյն Հայրապետին մերոյ, որ անտայլմաք հեռեող լիալ է սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոփայ. զկեկեղեցւոյ բարեկարգութիւնս Ե. դարուն նմանեցունելով կանոնական Առեղակօք իւրովք և հանապազօրեայ մատուր և անձնական ծանր աշխատակրութեամբք, Իսկ որք ջանան իբրտս զճրագն ընդ գրտանաւ զնելով ծածկել ի խաւարի նախանձս. զազգաշահ գործան Վեհափառ Հօր մերոյ, լձող միանգամ հայեցին նոքա ի մեծագործութիւնս նորա ի ճեմարանն ասեմ՝ և ի Թանգարանն, որք արտաքին հոյակապ շինուածովքն և ներքին բարեկարգութեամբքն հոշակն զփառս որպէս մեծագործ Հիմնադրին, նոյնպէս և Մայր Աթոռոյն Հայաստանեայց, որք և հային ընդհանրապէս յօգուտ ազգեա Հայոց և Եկեղեցւոյ:

$$H^* = G^* \cup \{0\}.$$

ՓՈՐՁ ԵՄՍԵԿԸՆ ՀԵՆԴԻՍ.

Յաւօք սրտի տեղեկացանք, որ ամսական Փոք յատուական հանդէսը ալ եւս չպէտքէ հրատարակուի, իւր ծախքը լցուցանելու չափով բաժանորդներ չունենալուն պատճառաւ, եւ թէ Հանդիսի մեծ. խմբագիրը նորա չորս եւ կէս ամեայ գոյութեան ժամանակամիջոցում՝ բացի նորա բաժանորդագներից իւր սեղ-հակոնութիւնից եւս ծախսել է 14,000 բուրլի:

Ի նկատի առնելով ռուսահայերիս նշանաւոր թիւը եւ այլ
համեմատաբար ա. ելի յարմար միջոցները՝ չենք կարող չխոստո-